ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2004 թվականի նոյեմբերի 24-ին

ԹԱՓՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 2. ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏԸ և ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման ընթացքում գոյացած թափոնների գործածության վրա:

2. Օրենքի գործողությունը չի տարածվում՝

ա) ռադիոակտիվ թափոնների,

բ) հոսքաջրերին խառնվող և բնական ջրատարներ թափվող նյութերի,

գ) արտանետման աղբյուրներից անջատվող գազային խառնուրդների հետ մթնոլորտ արտանետվող նյութերի, վրա:

դ) ***(կետն ուժը կորցրել է 22.06.15 ՀՕ-105-Ն)***

Սույն մասով նախատեսված՝ թափոնների գործածության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով:

3. Սույն օրենքի գործողությունը ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների մշակման հետ կապված հարաբերությունների նկատմամբ տարածվում է այնքանով, որքանով չի հակասում Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով նախատեսված կարգավորումներին:

(2-րդ հոդվածը փոփ. 22.06.15 ՀՕ-105-Ն, լրաց. 18.10.16 ՀՕ-163-Ն)

ՀՈԴՎԱԾ 4. ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) ***կոշտ կենցաղային թափոններ*** ՝սպառման թափոնների տեսակներ, որոնք առաջանում են բնակելի տարածքներում ֆիզիկական անձանց կողմից սպառման ընթացքում, ինչպես նաև ապրանքներ, որոնք անձնական և կենցաղային կարիքների բավարարման նպատակով բնակելի տարածքներում ֆիզիկական անձանց կողմից օգտագործման ընթացքում կորցրել են իրենց սպառողական հատկությունները: Կոշտ կենցաղային թափոններին են պատկանում նաև այն թափոնները, որոնք առաջանում են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում և կազմով նման են բնակելի տարածքներում ֆիզիկական անձանց կողմից սպառման ընթացքում առաջացող թափոններին.

2) ***արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոններ*** (այսուհետ՝ թափոններ)՝ արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) կամ սպառման ընթացքում գոյացած հումքի, նյութերի, արգասիքների, այլ արտադրանքի կամ մթերքի մնացորդներ, ինչպես նաև ապրանքներ (արտադրանք), որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները.

3) ***թափոններ առաջացնող***՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որի գործունեության ընթացքում գոյանում են թափոններ.

4) ***թափոնների գործածություն***՝ գործողություններ, որոնք ուղղված են թափոնների հավաքմանը, փոխադրմանը, տեղադրմանը, պահմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, հեռացմանը, վնասազերծմանը և թաղմանը.

5) ***վտանգավոր թափոններ*** ՝ թափոններ, որոնք իրենց ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկություններով վտանգ են ստեղծում կամ կարող են ստեղծել մարդու առողջության և շրջակա միջավայրի համար, և պահանջվում են դրանց հետ վարվելու հատուկ մեթոդներ, եղանակներ, միջոցներ.

6) ***թափոնների հավաքում***՝ գործունեություն, որը կապված է թափոնների հեռացման և հատուկ հատկացված տեղերում կամ օբյեկտներում դրանց տեղադրման հետ, ներառյալ՝ թափոնների տեսակավորումը՝ հետագա օգտահանման կամ հեռացման նպատակով.

7) ***թափոնների պահում***՝ թափոնների ժամանակավոր ~~տեղադրում~~ պահեստավորում հատուկ հատկացված տեղերում կամ օբյեկտներում 30 օրը գերազանցող ժամկետով՝ դրանց հետագա օգտահանման կամ հեռացման նպատակով.

8) ***թափոնների օգտագործում***՝ թափոնների կիրառումն ապրանքների արտադրության, էներգիայի ստացման կամ այլ նպատակներով.

9) ***թափոնների մշակում, վերամշակում***՝ տեխնոլոգիական գործողությունների իրականացում, որոնք կապված են թափոնների ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկությունների փոփոխման հետ.

10) ***թափոնների օգտահանում***՝ թափոնների օգտագործում՝ որպես երկրորդային նյութական կամ էներգետիկ ռեսուրս.

11) ***թափոնների հեռացում***՝ թափոնների հետ կապված գործողություններ, որոնք չեն հանգեցնում դրանց օգտահանմանը.

12) ***թափոնների վնասազերծում***՝ թափոնների վտանգավոր հատկությունների նվազեցում կամ վերացում մեխանիկական, ֆիզիկաքիմիական կամ կենսաբանական մշակման միջոցով.

13) ***թափոնների տեղադրում***՝ թափոնների մեկուսացում, որը բացառում է թափոնների հետագա օգտագործումը և ուղղված է դրանց չեզոքացմանն ու շրջակա միջավայրում վտանգավոր նյութերի հետագա տարածման կանխարգելմանը.

14)***թափոնների թաղում***՝ թափոնների վերջնական տեղադրում հատուկ ~~առանձնացված~~ հատկացված տեղերում կամ օբյեկտներում, որը բացառում է դրանց վտանգավոր ներգործությունը մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա.

15) ***թափոնների գործածության օբյեկտներ*** ՝ թափոնների հավաքման, պահման, մշակման, վերամշակման, օգտահանման, հեռացման, վնասազերծման և թաղման համար օգտագործվող տեղեր կամ օբյեկտներ.

16) ***հատուկ հատկացված տեղեր*** ՝ թափոնների ~~գործածության~~ տեղադրման կամ պահման համար օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված վայրեր՝ թափոնների տեղաբաշխման տեղեր, փոխաբեռնման կայաններ, պոլիգոններ, թափոնակուտակիչներ, աղբավայրեր, համալիրներ, շինություններ, արդյունաբերական հրապարակներ, պոչամբարներ, արտադրական լցակույտերի, մակաբացման ապարների տեղամասեր.

17) ***թափոնների հեռացման վայրեր*** ՝ թափոնների վնասազերծման, ոչնչացման կամ տեղադրման համար հատուկ հատկացված տեղեր կամ օբյեկտներ (այդ թվում՝ աղբավայրեր, պոլիգոններ).

18) ***թափոնների հեռացման վայրերը շահագործողներ*** ՝ իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերեր, որոնք պատասխանատու են թափոնների հեռացման վայրերում թափոնների ոչնչացման, վնասազերծման կամ տեղադրման (այդ թվում՝ թաղման) համար.

19) ***թափոնների հեռացման վայրերի մոնիթորինգ*** ՝ թափոնների հեռացման վայրերում և դրանց հարակից տարածքներում հողի, մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա ջրերի որակական ցուցանիշների վերաբերյալ տվյալների պարբերական հավաքում ակնադիտարկումների, գործիքային չափումների, նմուշառումների, լաբորատոր փորձարկումների միջոցով և դրանց մշակում.

20) ***թափոնների փոխադրում*** ՝ թափոնների տեղափոխում դրանց գոյացման կամ պահման վայրերից դեպի մշակման, օգտահանման կամ հեռացման վայրեր կամ օբյեկտներ.

21) ***թափոնների անդրսահմանային փոխադրում*** ՝ թափոնների փոխադրում որևէ պետության տարածքից այլ պետության տարածք կամ որևէ պետության իրավասության ներքո չգտնվող տարածքով՝ պայմանով, որ թափոնների նման փոխադրումը առնչվում է առնվազն երկու պետության շահերի.

22) ***թափոնների պետական դասակարգիչ*** ՝ թափոնների ծածկագրերի և անվանումների համակարգված ցանկ, որը նախատեսված է պետական կամ վարչական վիճակագրությունում օգտագործելու համար՝ թափոնների գոյացման, կուտակման, մշակման (վերամշակման), վնասազերծման և հեռացման մասին բազմակողմանի հիմնավորված տեղեկատվություն տրամադրելու նպատակով.

23) ***արտոնագրված աղբավայրեր*** ՝ աղբավայրեր, որոնց գործունեության համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կա թույլտվություն.

24) ***թափոնների տեղադրման*** կամ պահման ***սահմանաքանակ*** ՝ որոշակի տեսակի թափոնների սահմանային թույլատրելի քանակ, որը օրենսդրությամբ սահմանված ձևով~~, որոշակի ժամկետով~~ կարելի է ~~տեղաբաշխել~~ տեղադրել կամ պահել թափոնների տեղադրման կամ պահման համար հատուկ հատկացված տեղերում, օբյեկտներում՝ հաշվի առնելով տվյալ տարածքի էկոլոգիական իրավիճակը.

25) ***թափոնների գոյացման նորմատիվ*** ՝ որոշակի տեսակի թափոնների սահմանաքանակ՝ արտադրանքի որոշակի միավորի ստացման դեպքում.

26) ***թափոնների անձնագիր*** ՝ թափոնների տեսակը և վտանգավորության դասը հավաստող փաստաթուղթ, որը տեղեկություններ է պարունակում դրանց կազմի վերաբերյալ.

27) ***թափոնների տեսակ*** ՝ թափոնների դասակարգման համակարգին համապատասխան՝ ընդհանուր հատկություններ ունեցող թափոնների խումբ.

28) ***թափոնների անձնագրավորում*** ՝ ռեսուրսախնայման և թափոնների անվտանգ գործածությունն ապահովելու նպատակով թափոնների անձնագրի տվյալների հիման վրա իրականացվող՝ թափոնների նույնականացմանն ուղղված գործողություններ.

29) ***արգելված թափոններ*** ՝ թափոններ, որոնց հետագա գործածության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամրագրվի արգելման մասին որոշում.

30) ***թափոնների պետական կադաստր*** ՝ թափոնների դասակարգչի, թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների, թափոնների և դրանց օգտահանման ու վնասազերծման տեխնոլոգիաների վերաբերյալ տվյալների ամբողջություն.

31) ***ընդերքօգտագործման թափոններ*** ՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման, վերամշակման ~~և~~ կամ հարստացման արդյունքում առաջացած թափոններ, այդ թվում՝ պոչանքներ, մակաբացման ապարներ ~~մակաբացման ապարներ և այլ թափոններ~~.

32) ***մակաբացման ապարներ*** ՝ ***հ***անքամարմինները կողքերից պարփակող և վրայից ծածկող, ինչպես նաև հանքամարմինների սահմաններում գտնվող դատարկ ապարներ և ոչ հաշվեկշռային պաշարներին դասվող օգտակար հանածոներ, որոնք ենթակա են դեպի հատուկ հատկացված տեղեր փոխադրման~~÷~~.

33) վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա՝ Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, մշակում, վերամշակում, օգտահանում, վնասազերծում, թաղում կամ հեռացում գործունեության տեսակներով զբաղվելու իրավունքը հաստատող, «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված թույլտվություն և այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ.

34) թափոնների տեսակավորում՝ գոյացման, հավաքման, պահման, մշակման, վերամշակման, օգտահանման կամ հեռացման վայրում թափոնների առանձնացումն ըստ համանման հատկություններ ու բաղադրություն ունեցող թափոնների տեսակների.

35) պոլիգոն՝ թունավոր, հրդեհավտանգ, քայքայիչ կամ այլ վտանգավոր հատկություններ ունեցող թափոնների պահման կամ հեռացման համար հատուկ հատկացված տեղ կամ օբյեկտ (բացառությամբ չտեսակավորված կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի).

36) թափոնների գործածության ստորակարգություն (թափոնների հիերարխիա)՝ թափոնների գոյացման կանխարգելման ու անվտանգ գործածության ապահովման նպատակով սույն օրենքով սահմանված նախընտրելի գործողությունների հաջորդականություն՝ թափոնների գոյացման կանխարգելում և քանակի կրճատում, վերաօգտագործում, վերամշակում, օգտահանում (էներգիայի վերականգնում), մարդու առողջության և շրջակա միջավայրի համար անվտանգ եղանակով թափոնների հեռացում.

37) թափոնների սեփականատեր՝ թափոններ առաջացնող կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին համապատասխան թափոնները տիրապետելու, օգտագործելու կամ տնօրինելու իրավասություն ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, կամ անհատ ձեռնարկատեր.

38) թափոնների կուտակում՝ թափոնների առաջացման վայրում կամ օբյեկտում թափոնների կարճաժամկետ պահեստավորում՝ առաջացման պահից առավելագույնը 30 օր ժամկետով**:**

2. Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով սահմանված՝ ընդերքօգտագործման թափոնների կառավարմանը և վերամշակմանը վերաբերող հասկացություններն սույն օրենքում օգտագործվում են նույն իմաստով:

(4-րդ հոդվածը փոփ., խմբ., լրաց. 22.06.15 ՀՕ-105-Ն, լրաց., փոփ. 22.05.18 ՀՕ-329-Ն, լրաց. 26.10.22 ՀՕ-402-Ն)

ՀՈԴՎԱԾ 6. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

ա) մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանությունը թափոնների բացասական ներգործությունից.

բ) նյութահումքային և էներգետիկ ռեսուրսների բանական օգտագործման ապահովումը.

գ) թափոնների գործածության վերաբերյալ հասարակության էկոլոգիական, տնտեսական և սոցիալական շահերի զուգակցումը.

դ) շրջակա միջավայրը թափոններով աղտոտողները կրում են բացասական հետևանքների վերացման կամ նվազեցման պարտականությունը.÷

2. Թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունը թափոնների գոյացման և դրանց վտանգավորության նվազեցումն է հետևյալ միջոցներով.

ա) անթափոն և սակավաթափոն տեխնոլոգիաների ներդրման նպատակով գիտատեխնիկական նորագույն նվաճումների օգտագործում.

բ) թափոնների քանակի նվազեցման նպատակով նյութահումքային ռեսուրսների համալիր օգտագործում.

գ) հումքային արժեք ունեցող թափոնների առավելագույն սպառում ուղղակի, կրկնակի կամ այլընտրանքային օգտագործումով.

դ) օգտահանման համար ոչ պիտանի թափոնների անվտանգ հեռացման ապահովում՝ թափոնների վնասազերծման և ոչնչացման համապատասխան տեխնոլոգիաների, էկոլոգիապես անվտանգ մեթոդների և միջոցների մշակմամբ.

ե) թափոնների գործածության ոլորտում տեղեկատվության մատչելիության ապահովում.

զ) տնտեսական խթանման մեխանիզմների սահմանում÷.

է) թափոնների գործածության ստորակարգության (թափոնների հիերարխիա) կիրառում.

ը) թափոնների տեսակավորում՝ դրանց գոյացման, հավաքման, պահման, մշակման, վերամշակման, օգտահանման կամ հեռացման վայրում։

ԳԼՈՒԽ 2.

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 7. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Թափոնների գործածության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններն են՝

ա) թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության մշակումը և իրականացման ապահովումը.

բ) թափոնների գործածության ոլորտում պետական կառավարման մարմինների գործունեության համակարգումը.

գ) սակավաթափոն տեխնոլոգիաների ներդրման, թափոնների հավաքման և օգտահանման խթանման տնտեսական մեխանիզմների ապահովումը.

դ) թափոնների հաշվառման~~, գոյացման, հեռացման (ոչնչացման, վնասազերծման, տեղադրման) և օգտահանման~~ կարգի և գործածության կանոնների ու պահանջների սահմանումը.

ե) վտանգավոր թափոնների ~~վերամշակման, վնասազերծման, պահման, փոխադրման և տեղադրման~~ գործածության գործունեության լիցենզավորման կարգի սահմանումը.

զ) վտանգավոր և արգելված թափոնների ցանկերի սահմանումը.

է) թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման կարգի սահմանումը.

ը) վնասազերծված և օգտահանման ոչ ենթակա թափոնների տեղադրման օբյեկտների ստեղծման ապահովումը.

թ) թափոնների գործածության ոլորտում միջազգային համագործակցության իրականացումը.

ժ) աղբավայրերի մոնիթորինգի իրականացման կարգի սահմանումը.

ժա) օրենքով նախատեսված այլ լիազորություններ։

(7-րդ հոդվածը փոփ. 27.10.17 ՀՕ-174-Ն. խմբ., լրաց. 26.10.22 ՀՕ-402-Ն)
(26.10.22 ՀՕ-402-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

ՀՈԴՎԱԾ 8. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(վերնագիրը փոփ. 04.03.20 ՀՕ-117-Ն)

1. Թափոնների գործածության ոլորտում շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնի իրավասություններն են՝

ա) մասնակցությունը թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության ձևավորմանը.

բ) թափոնների գործածության ոլորտում նպատակային ծրագրերի կազմումը.

գ) թափոնների պետական հաշվառման իրականացումը.

դ) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար թափոնների տեղադրման կամ պահման սահմանաքանակների հաստատումը.

ե) վտանգավոր և արգելված թափոնների ցանկերի կազմումը.

զ) ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի սահմանումը.

է) վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրումների թույլտվությունների տրամադրման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

ը) թափոնների գործածության օբյեկտների տեղադրման վայրերի վերաբերյալ համաձայնություն տալը.

թ) թափոններ առաջացնողների կազմած՝ թափոնների անձնագրերի համաձայնեցումը.

ժ) թափոնների գոյացման ծավալների վերաբերյալ տեղեկատվական բանկի ստեղծումը.

~~ժա) օրենքով սահմանված կարգով թափոնների գոյացման, մշակման, օգտահանման, տեղադրման և հեռացման ժամանակ պոլիգոնների, համալիրների, շինությունների և այլ հատուկ հատկացված վայրերի կամ օբյեկտների շինարարության, վերակառուցման և շահագործման նախագծային փաստաթղթերի ու համալիր ծրագրերի պետական բնապահպանական փորձաքննության իրականացումը.~~

ժա) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով, թափոնների գործածության հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պետական փորձաքննության իրականացումը.

ժբ) թափոնների պետական կադաստրի վարումը.

ժգ) սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության փոխանակումն այլ գերատեսչությունների հետ.

ժդ) թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների կազմման, վարման, ինչպես նաև մոնիթորինգի (մշտադիտարկում) իրականացումը.

ժե) թափոնների գործածության ոլորտը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակումը և իր իրավասության սահմաններում ~~գերատեսչական~~ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի, այդ թվում՝ ուղեցույցերի և հրահանգների ընդունումը.

ժզ) թափոնների գործածության ոլորտում միջազգային համագործակցության և թափոնների անդրսահմանային փոխադրման հարցերով միջազգային պայմանագրերի կնքումը.

ժէ) միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա իրավասու պետությունների հետ թափոնների գործածության ոլորտում տեղեկությունների փոխանակումը.

ժէ.1) թափոններ գոյացնող, վերամշակող և օգտահանող օբյեկտների ռեեստրային գրանցման հաշվետվությունների և ռեեստրի վարման գրքի ձևերի հաստատումը.

ժէ.2) թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկի և ռեեստրի վարման գրքի ձևերի հաստատումը.

ժէ.3) թափոնների անձնագրի օրինակելի ձևի հաստատումը.

ժէ.4) թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման կամ պահման սահմանաքանակների նախագծերի հաշվարկի օրինակելի ձևի հաստատումը.

ժէ.5) Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկի հաստատումը.

ժէ.6) Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորումը.

ժը) օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

(8-րդ հոդվածը փոփ. 22.06.15 ՀՕ-105-Ն, 23.03.18 ՀՕ-225-Ն, լրաց. 21.03.18 ՀՕ-188-Ն, փոփ. 04.03.20 ՀՕ-117-Ն)

ՀՈԴՎԱԾ 9. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թափոնների գործածության ոլորտում առողջապահության բնագավառի կառավարման լիազորված մարմնի իրավասություններն են՝

ա) թափոնների գործածությանը վերաբերող նորմատիվատեխնիկական փաստաթղթերում մարդու առողջության համար անվտանգության պահանջների մշակումը և թափոնների գոյացման, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, վնասազերծման և թաղման ընթացքում մարդու օրգանիզմի վրա վնասակար ու վտանգավոր ազդեցության բացառման նպատակով հանրային առողջապահական նորմատիվների, սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների հաստատումը ~~սանիտարական և հակահամաճարակային կանոնների ու նորմերի, հիգիենիկ նորմատիվների մշակումը և դրանց պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը~~.

բ) թափոնների բացասական ներգործությունից մարդու առողջության պաշտպանության միջոցառումների գերակա ուղղությունների մշակումը և դրանք Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը.

գ) թափոնների գործածության օբյեկտների տեղադրման վայրերի սահմանման վերաբերյալ համաձայնություն տալը.

դ) թափոններից ստացվող արտադրանքի նկատմամբ սանիտարահիգիենիկ պահանջների սահմանումը և հիգիենիկ եզրակացության տրամադրումը.

ե) ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի կազմմանը մասնակցելը.

զ) օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Գ Լ ՈՒ Խ 3.

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐՄԱՎՈՐՈՒՄԸ, ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՈՒՄԸ, ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ~~ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՈՒՄԸ~~

ՀՈԴՎԱԾ 12. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐՄԱՎՈՐՈՒՄԸ

1. Մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության ու թափոնների ծավալների նվազեցման նպատակով թափոնների գործածության մեջ ներգրավված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար սահմանվում են թափոնների տեղադրման կամ պահման սահմանաքանակներ:

2. Թափոնների տեղադրման կամ պահման սահմանաքանակները սահմանում են թափոնների գործածության ոլորտում պետական կառավարման լիազորված մարմինները՝ շրջակա միջավայրի վրա սահմանային թույլատրելի վտանգավոր ներգործությունների նորմատիվներին համապատասխան:

3. Թափոնների գործածության մեջ ներգրավված իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը շրջակա միջավայրի ոլորտում պետական կառավարման լիազորված մարմնի հաստատմանն են ներկայացնում թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման կամ պահման սահմանաքանակների նախագծեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

(12-րդ հոդվածը փոփ. 04.03.20 ՀՕ-117-Ն)

Հոդված 12.1. Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորումը

1. Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորումն իրականացվում է սույն օրենքով, «Լիցենզավորման մասին» օրենքով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

2. Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա ստանալու հայտի և պահանջվող փաստաթղթերի հիման վրա շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազորված մարմինը լիցենզիային կից տրամադրում է նաև սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությամբ սահմանված գործունեության յուրաքանչյուր տեսակով զբաղվելու համար լիցենզիայի համապատասխան ներդիր:

3. «Լիցենզավորման մասին» օրենքին համապատասխան լիցենզավորված անձանց վտանգավոր թափոնների գործածության թույլատրված տեսակը, գործունեության վայրը և գործածվող թափոնների տեսակները նշվում են լիցենզիայի ներդիրում:

4. Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիայի կամ լիցենզիայի ներդիրի վերաձևակերպումը, կասեցումը, դադարեցումը, նոր ներդիրի տրամադրումը կարգավորվում են «Լիցենզավորման մասին» օրենքով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

5. Լիցենզավորված անձինք վճարում են պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված չափով և պարբերականությամբ:

ՀՈԴՎԱԾ 13. ԹԱՓՈՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՈՒՄԸ և ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

1. Թափոնների պետական հաշվառումը և անձնագրավորումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

1.1. Վտանգավոր թափոններ առաջացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը~~առաջացնողները~~ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմում և հաստատում են ոլորտում լիազորված մարմնի հետ համաձայնեցված թափոնների անձնագրերը, իսկ Կառավարության որոշմամբ նախատեսված դեպքերում ծանուցելով լիազոր մարմնին՝ դադարեցնում են անձնագրի գործողությունը կամ տվյալ տեսակի թափոնի համար հաստատում նոր անձնագիր:

1.2. Վտանգավոր թափոններ առաջացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերն այլ անձանց փոխանցվող վտանգավոր թափոնի հետ տրամադրում են նաև տվյալ թափոնի համար հաստատված թափոնի անձնագրի պատճենը, որի տիտղոսաթերթի վրա նշում են վտանգավոր թափոնը փոխադրողի և թափոնի նոր սեփականատիրոջ տվյալները (իրավաբանական անձի անվանումը, գտնվելու և գործունեության վայրերը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անուն, ազգանունը, հաշվառման հասցեն և գործունեության վայրը) և թափոնի անձնագրի պատճենը տրամադրելու ամսաթիվը:

1.3. Այլ անձանց առաջացրած վտանգավոր թափոնների նոր սեփականատերերը, տվյալ թափոններն առաջացնող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի բացակայության դեպքում, թափոն առաջացնողի փոխարեն կազմում, լիազոր մարմնի հետ համաձայնեցնում և հաստատում են թափոնի անձնագիր:

2. Թափոնների գործածության մեջ ներգրավված իրավաբանական անձինք (ներառյալ՝ օտարերկրյա և անհատ ձեռնարկատերերը), պարտավոր են օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել գոյացող, օգտագործվող, վնասազերծվող, այլ անձանց փոխանցվող կամ այլ անձանցից ստացվող, ինչպես նաև տեղադրվող, կուտակվող կամ պահվող թափոնների սկզբնական հաշվառում:

3. Վտանգավոր թափոններ առաջացնող և թափոնների ~~տեղադրում~~ պահում, օգտահանում կամ հեռացում իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը ~~(ներառյալ՝ օտարերկրյա և անհատ ձեռներեցները)~~, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ոլորտում լիազորված մարմնին պարտավոր են ներկայացնել վարչական վիճակագրական հաշվետվություններ:

4. Թափոնների առաջացման, պահման, օգտահանման և հեռացման մասին~~վերաբերյալ~~ վարչական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման հրահանգը թափոնների պետական դասակարգչի հիման վրա սահմանում է շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազորված մարմինը:

(13-րդ հոդվածը լրաց. 22.06.15 ՀՕ-105-Ն, փոփ. 04.03.20 ՀՕ-117-Ն)

ՀՈԴՎԱԾ 17. ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

1. Շրջակա միջավայրի վրա թափոնների ներգործությունը որոշելու և կանխատեսելու, դրանց բացասական հետևանքները ժամանակին բացահայտելու և կանխարգելելու նպատակով թափոնների հեռացման վայրերը շահագործողներն, իսկ շահագործողների բացակայության, թափոնների հեռացման վայրերի (այդ թվում՝ աղբավայրերի) շահագործման դադարեցման կամ փակման դեպքում դրանք տնօրինող անհատ ձեռնարկատերերը կամ իրավաբանական անձինք ~~ու տնօրինողները, ինչպես նաև շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազորված մարմինը~~ իրականացնում են պարբերական մոնիթորինգ:
2. Շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազորված մարմինն իրականացնում է՝
   1) իր տարեկան աշխատանքային ծրագրին համապատասխան թափոնների հեռացման վայրերի կամ դրանց հարակից տարածքների հողի, մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա ջրերի որակական ցուցանիշների վերաբերյալ տվյալների հավաքում ակնադիտարկումների, գործիքային չափումների, նմուշառումների, լաբորատոր փորձարկումների միջոցով,
   2) սույն հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց տրամադրած և սույն մասի 1-ին կետով սահմանված տվյալների հավաքագրում, ուսումնասիրություն, վերլուծություն և դրանց արդյունքների տեղադրում պաշտոնական էլեկտրոնային կայքում:
3. Սույն հոդվածով սահմանված տվյալների ուսումնասիրության և վերլուծության արդյունքները կիրառվում են թափոնների կառավարման ոլորտի ռազմավարական փաստաթղթերի մշակման, համապատասխան միջոցառումների ծրագրման և իրականացման գործընթացներում:

4. Թափոնների հեռացման վայրերի մոնիթորինգը շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի միացյալ համակարգի բաղկացուցիչ մասն է:

(17-րդ հոդվածը փոփ. 22.06.15 ՀՕ-105-Ն, 04.03.20 ՀՕ-117-Ն, 26.10.22 ՀՕ-402-Ն)

Գ Լ ՈՒ Խ 4.

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 20. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ, ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ և ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Թափոնների գործածության ոլորտում իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը և ֆիզիկական անձինք պարտավոր են՝

ա) թափոնների գործածության ոլորտում պահպանել սույն օրենքի և իրավական այլ ակտերի պահանջները.

բ) թափոնները ~~տեղաբաշխել~~ տեղադրել կամ պահել միայն սույն օրենքով նախատեսված՝ դրանց համար հատուկ հատկացված տեղերում.

գ) տեղեկացնել թափոնների գործածության ընթացքում առաջացած՝ մարդու առողջությանն ու շրջակա միջավայրին վտանգ սպառնացող վթարային իրավիճակների մասին և միջոցներ ձեռնարկել դրանց հետևանքների վերացման ուղղությամբ:

Գ Լ ՈՒ Խ 5.

ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԳՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՅԱՑՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 21. ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԳՏԱՀԱՆՄԱՆ և ԴՐԱՆՑ ԳՈՅԱՑՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. Թափոնների օգտահանման և դրանց գոյացման ծավալների նվազեցման ապահովմանն ուղղված միջոցառումները հիմնվում են թափոնների գործածության ստորակարգության (թափոնների հիերարխիա) կիրառման սկզբունքի վրա և ներառում ~~նախատեսում~~ են՝

ա) թափոնների գոյացման և տեղադրման կամ պահման ծավալների սահմանաքանակների սահմանում.

բ) ~~շրջակա միջավայրում~~հատուկ հատկացված տեղերում թափոնների տեղադրման կամ պահման համար բնապահպանական ~~վճարի~~ հարկի սահմանում՝ տարբերակելով դրանց ~~վճարման~~ հարկման դրույքաչափերը՝ ելնելով թափոնների վտանգավորության աստիճանից և տեղադրման կամ պահման տարածքի տնտեսական՝ հողի կադաստրային արժեքից.

գ) թափոնների գոյացման ծավալները նվազեցնող և արտադրության մեջ սակավաթափոն տեխնոլոգիաներ ներդնող, ինչպես նաև երկրորդային հումք համարվող թափոնների հավաքման, պահեստավորման և հանձնման գործառույթներով զբաղվող ընկերություններին և կազմակերպություններին օրենքով սահմանված դեպքում և կարգով արտոնությունների տրամադրում.

դ) ռեսուրսային արժեք ներկայացնող թափոնների ցանկի ստեղծում, որոնց համար սահմանվում է հատուկ ռեժիմ՝ դրանց հավաքումը, պահեստավորումը և օգտագործումը խթանելու նպատակով.

ե) թափոնների օգտահանման և դրանց գոյացման նվազեցմանը նպատակաուղղված գիտահետազոտական աշխատանքների՝ օրենսդրությամբ սահմանված կարգով նպատակային ֆինանսավորում.

զ) ~~շրջակա միջավայրում~~ հատուկ հատկացված տեղերում թափոնների տեղադրման կամ պահման համար օրենսդրությամբ սահմանված բնապահպանական ~~վճարներից~~ հարկերից ստացված միջոցների նպատակային օգտագործում՝ թափոնների օգտահանմանն ու դրանց ծավալների նվազեցմանը նպատակաուղղված միջոցառումների ֆինանսավորման համար.

է) թափոնների օգտահանման միջոցառումների համար ֆինանսավորման հիմնադրամների ստեղծում՝ թափոններ առաջացնողների, դրանց սեփականատերերի, հայրենական և օտարերկրյա իրավաբանական ու ֆիզիկական անձանց կամավոր մուծումների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ աղբյուրներից ստացվող միջոցների հաշվին.

ը) թափոնների, այդ թվում՝ կոշտ կենցաղային թափոնների գոյացման վայրում դրանց տեսակավորված հավաքում՝ բնապահպանական ստանդարտների համապատասխան նյութահումքային և էներգետիկ

ռեսուրսների օգտահանման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով։ ÷

(21-րդ հոդվածը փոփ. 22.06.15 ՀՕ-105-Ն)

ՀՈԴՎԱԾ 22. ~~ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ~~ ՀԱՏՈՒԿ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՏԵՂԵՐՈՒՄ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԿԱՄ ՊԱՀՄԱՆ ՀԱՄԱՐ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ~~ՎՃԱՐՆԵՐԸՀԱՐԿԵՐԸ~~

1. ~~Շրջակա միջավայրում~~ Հատուկ հատկացված տեղերում թափոնների տեղադրման կամ պահման համար -բնապահպանական հարկերը սահմանված են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով։~~սահմանվում են բնապահպանական վճարներ՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան։~~